



89. ԶՈՒԱՆԻ ԱՌՃԻԿԸ

Թան ասեմ իլել ա, բանլքի իլել չի, Թան ասեմ իլել չի, բանլքի իլել ա, ով կրգիղան: Մեզանից օխտը սարից, օխտը կետից, օխտը քոլից ու օխտը ծովից էն ղոլ՝ մին ախշարքըմ, մին Թաքավոր ա իլել, ըստան էլ իլել ա, իլել չի մին մինըճար տղեն ա իլել, համա մին ծալը պակաս ա իլել: Էս պանը Թաքավորին շատ ա մտկի ծովը քցել: Մտածել ա, Թան ո՞նց անի, ո՞նց չանի, որ ուրան մեռնիլիցը եղը տղեն կարա երգիրը կառավարի:

Թաքունու նհետ շատ ա տվել-առել, շատ ա կլոխ տրաքըցրել, վերչը որոշել ա տղին փսակի մին խելքակաղար ախճկա նհետ, որ կոնյա ընդրա խորուրթնեռովը երգիրը պահի, Թախտը խայտառակ չանի:

Սիֆտըմը տղին փսակել ա ուրան վաքիլի ախճկա նհետ:

Առաջին օրը տղին ասել ա, որ հանգըրվի ավի են քինալու: Տղեն էլ մին քանի օրվա հաց ա չինիլ տվել, Թուր ու Թվանգ ա պաղրաստիլ տվել, համա հենց ուզել են պալատիցը տոնս կան, հերը Թողացել չի մին պան էլ ա նհետը վեր ունի՝ ոչ հաց, ոչ Թուր ու Թվանգ: Նինեղ են տանտանկ ծիանքը հու ճընապա ընգել:

Շատ են քինացել, Թան քիչ, էտ էլ Աստոծ գիղան, մին անպոռի կըշտի հերն ասել ա. —Այ Թան մին կուտուր հաց իներ, ոնց կուտի, է...

—Բա որ հաց ի վեր ունըմ, խի՞ Թողացիր ոչ, —ասըմ ա տղեն:

Ճուր են խմըմ հու առաջ քինըմ:

Հերն ասըմ ա. —Հայ մին մարդըվան իներ, հա՛, ճընապեքնիս իչքամ կըկարճանար...

—Ա՛յ հեր, —ասըմ ա տղեն, —տոն վել ես չո՛լ-յաբանա տեղըմը ընդհենց մին նաթանոնչ պան ես ուզըմ, որ ճարիլի Թանըր չինի:

—Է՛, շատ ես խակ է, տղե՛ս, շատ ես խակ, —ասըմ ա Թաքավորը, ծիան կլոխը շուռ տալիս:

Կանլիս են տուն:

Եփ տղեն քինըմ ա հարսի կուշտը, Թաքավորը սկսըմ ա անգամ տինիլը, Թան ինչ են խոսալու:

Հարսը հրեցնում ա, թան պերած ավերնիտ հուր ա: Տղեն էլ ասում ա. «Տանուտակ ծեռով ավ փռնիլ կինի՞: Հերըս ո՛չ թողաց թվանգ վեր ունեմ, ո՛չ էլ հաց: Հրսանք մին անսպրի կուչտ, ասավ. «Հաց ինեք, ոնց կուտիմ»: Եդո էլ թան. «Մին մարդըվան ինեք, ճընապեք-նիս իշքան կրկարճանար»»:

Հարսըն էլ տանում ա, պերում, թան.—Հերըտ յա ախմախի մինն ա, յա էլ գիժ ա:

Թաքավորը էս որ լսում ա, էքսի օրը սուսուփուս հարսին դըր-կըմ ա հորը տունը, ինքը քինում վանգիրի ախճկանն ա պերում հարս:

Համին դայդի էս հարսին էլ ա փորցըմ, տենում ա՝ չէ, ըստանա էլ թաքուհի չի տոնս կան, խելք ու չնորքով հարս չի տաննալ, ընդրան էլ ա տոնս անում: Մին օր էլ տղին վեր ա ունում, տոնս կանխս ուրա ախշարքը պըտըտիլի, բանքի մին հալալ կաթնակերի ուսստ կան:

Շատ քաղաքնի հու կեղեր են մըննում, շատ տեղեր են ղոնաղ ընգնում, շատերի հետ են զրոնց անում, շատ հարս ու ախճկերանց են տենում, համա ոչ մինը թաքավորին տուր չեն կանխս:

Սըհենց երգեն-պանակ ման կանխ վախտը, սարերիցը մինըմն էլ ուսստ են կանխս մին չորանի, որն ուրա ախճկա նհետ ոխճար պա-հիլիս ա ինում: Էս ախճիկը թանհրով-թանչանխուստով թաքավորին շատ ա տուր կանխս:

Թաքավորն ուզում ա խելքն էլ փորցի, ասում ա.—Մին սիպտանկ ոխճարի եղալի կաթ ինեք, կըխմի:

Ախճիկը փարչը վեր ա ունում քինում մին սև ոխճար կթըմ, պե-րում:

Թաքավորն ասում ա.—Ես սիպտանկ ոխճարի կաթ ուզեցի, խի՞ սևը կթեցիր:

—Տոն եղալի կաթ ուզեցիր,—ասում ա ախճիկը,—ես էլ սևը կը-թեցի, սիպտանկի կաթը եղալի չի ինում:

Քչերը մնում են չորանի օբըմը:

Չորանը մին ոխճար ա պերում, որ մորթի, ախճիկն ասում ա.—Ա հե՛ր, խի՞ ետ ոխճարը պերար, ախըր եղի ա, սև կանոն ունի, ճա-կատն էլ՝ դաչխա:

Չորանը ուզում ա տանի, որ փոխի, համա թաքավորը թողում չի, ասում ա.—Հենց ետ ոխճարը մորթի՛, թան քու ախճկա ասածը ղորթ ինի, քե են ղըդար փող կըտամ, որ քառասուն ոխճար առնես, կանոներն էլ տակին:

Չորանը մորթում ա, ղորթ որ փորիցը մին սև կանոն ա տոնս կանխս, ճակատն էլ՝ դաչխա: Թաքավորն ուրա խոստացածն ա տա-լիս, ախճիկն էլ համով-հոտով խըրոված ա անում, ուտում են, խմում, եդո քնում:

Էքսի ռավոտը թաքավորն ու իւրան տղեն ռխճարի սոլրուն
թափչուր են անըմ չորանի հընգերներին, չորանին հու ախճկանը
վեր են ունըմ, սարիցը քանըմ կեղը:

Մին խելաք տեղ որ քինըմ են, թաքավորն ասըմ ա.—Թան մին
կուտուր հաց իներ, իշտահով կուտի, հա՛ ...

Չորանն ուզըմ ա խուրջինիցը պան-ման հանի, ախճիկը թողըմ
չի, ասըմ ա՝ ղոնաղի սիրտը հաց չի ուզըմ: Չըբուղը թուլթուն ա
լցնըմ, կըպցընըմ, տալիս թաքավորին:

Հենց մըննըմ են մին ծոթ, թաքավորն ասըմ ա.—Այ թան մին
մարդըվան իներ, ճընապեքնիս խելաք կըկարճըցնիք:

Չորանը գարմանըմ ա, ասըմ.—Ա՛յ մարթ, հու ծալըտ պակաս
չի, էս յաբանի չոլըմը մարդըվանը ի՞նչ ա անըմ:

—Ա՛ հեր, ղոնաղիտ լոլգուն տո՛ւ հըսկացար ոչ,—ասըմ ա
ախճիկը,—ղոնաղն ուզըմ ա մին լավ զրոնց լսի,—հու սկսըմ ա մին
համով-հոտով նաղըլ ասիլը:

«Ինըմ ա, ինըմ չի, մին օրվա հացի կարոտ մարթ ա ինըմ, անը-
մը՝ Մանուկ: Ըստան մին նախշուն կնիկն ա ինըմ, մին էլ՝ մինըճար
մին տղեն: Տենըմ ա, որ կարըմ չի ըստանց պահի, մին օր էլ կլոխ ա
վեր ունըմ, տանիցը տո՛ւս կալիս, թան ինչ ա բախտը փորցի, բալքի
մին թանհըրն անի, քոլփաթթը պահի:

Մին սաղ տարի ման ա կալիս, տեսը-տեն ա ընգնըմ, համա
մինանկ իւրան կլոխն ա կարըմ մին թանհըով պահի: Սըհենց կար-
քին ախշաղանքի յա ման կալիս ինըմ, եփ ուստ ա կալիս Մուրադ
անըմով մին բազըրգանի: Էս բազըրգանը եփ տենըմ ա, որ Մանու-
կը չենք ու չնորքով տղա յա, վեր ա ունըմ ծառա: Համա պայման
ա կապըմ, որ իշքան ախշաղի կուշտ ուտիլու վա, թանգան-թանամոլ
հըքնըվի, մինանկ տանըմ վերչին վարցքի տեմաց մին խրատ հու
մին ոսկի յա ստանալու:

Մանուկը, ճարը կտրած, դաբուկ ա կենըմ հու սկսըմ ա ղուլլուղ-
չուլթունը: Բազըրգան Մուրադը իւրան խոսկը տափովը չի տալիս,
Մանուկին աղի մնան հըքցնըմ ա, իւրան նհետ սուփրի նըստըցնըմ,
Մանուկն էլ բազըրգանի հացը հարամ չի անըմ, ախշաղըմ ա ընդ-
րա սրտի ուզածի մնան:

Տարին որ թըմամըմ ա, բազըրգանն ասըմ ա.—Մանուկ, ա՛ռ իմ
խոստացած ոսկին, եղո անգաճնիտ լա՛վ պանց լսի, թան ինչ եմ ասըմ:
Գյանքըմըտ ինչ էլ որ պըտահի, թանգան քիսից փող վե՛ր չունես:

Էքսի տարին թըմամիլիցը եղը Մուրադը Մանուկին կանչըմ ա,
թան.—Էս մին ոսկին էլ վե՛ր կալ հու անգաճ արա: Շտեղ էլ որ ինես,
աչկովըտ ինչ էլ որ տենաս, ուրիշի կոռծին խառնըվես ոչ, ոչ մինին
ոչ մի խոսկ ասես ոչ, ո՛չ տեսել ես, ո՛չ էլ քու պետկն ա:

Իրեքինջի տարին էլ որ թըմամըմ ա, Մուրադն էլՀան ասըմ ա.—Մեր պայմանի վանդեն թըմամել ա, ա'ռ էս ոսկին Հու անգա'ճ կալ իմ խոսկին: Ինձանա քե ամանաթ, կըպըտահի կաջըղվես, միսըտ կուտես, Համա մին պան անիլից առաջ, վըռագես ոչ, մին քիչ Հանդարդ կըմնաս, դուրաղ կըտաս, եղո ինչ կանես, կանես: ՄՀի տո՛ւ ազադ ես, կուզես քինա քու տունը, կուզես էլՀան ախշաղի իմ կըշտին:

Մանուկը մին քիչ փիքը ա անըմ, ասըմ.—Աղա' ջան, էս ա չորս տարի յա քոկփանթիցս խանրար չունեմ, քինան տենամ իչ կա, կա ոչ, եղո կըկամ:

ՍըՀենց էլ անըմ ա: Իրեք ոսկին ջիբըմը ճընապա յա ընգնըմ:

Շատ ա քինըմ, թան քիչ, Աստոծ գիղան: Քչերը որ վրան յա կանխս, դոնաղ ա ընգնըմ մին տուն:

—Ղոնաղն Աստու տվածն ա, բա տո՛ւ սոված չե՞ս,—ասըմ ա տանտերը, ուրա ծեռքովը մին դանչանգ սուփրա յա պանց անըմ Հու նըստըմ են Հացի ինքը, տանտերը, մին էլ մին բողար չուն:

Ուտըմ են, խմըմ, ինչ էլ որ տակին մնըմ ա, լցնըմ են մին ամանի մեջ: Եփ աման ինչը պըրծնըմ են, տանտերը էտ թըրմասկի ամանը տանըմ ա տան պուճախըմը ոսկի գինջիլով կապած մին նախշուն կընգա առաջին տինըմ:

Մանուկը պերանն էլ ա թուչըմ չի, թան էս իչ պան ա, խի յա սըՀենց: Սըտկըմը դայիմ ա պահըմ բանգըրգանի ասածը:

Քնըմ են, վեր կենըմ, էլՀան սուփրա են քցըմ ուտըմ, խմըմ, եղո Մանուկը չնորակալութուն ա ասըմ տնատերին, տո՛ւս կանխս:

Տնատերը Մանուկին ճընապա յա քցըմ մինչու դանվանդեն, եղո Հըրցնըմ ա.—Ղանի'ր, եկար, կերար, խըմեցիր, մՀի էլ քինըմ ես, լանվ ես անըմ, բա խի՞ չես Հըրցնըմ, թան էս ինչ պատմութուն ա, էտ ինչ կնիկ ա գինջիլով կապած:

—Աղա' ջան,—ասըմ ա Մանուկը,—ես ճընապի մարթ եմ, քու ցավին չարա անողը չեմ, իմը մին պուճախ էր՝ քնեցի, մին փոր Հաց էր՝ կերա, ըտրա մՀար տափիցը մինչու երգինքը չնորակալ եմ, մնացածը իմ կոծը չի, ոչ տեսել եմ, ոչ էլ լսել:

—Դե որ էտքան գինջ մարթ ես, անշան ես, եկ քե մին պան եմ շանց տալու,—ասըմ ա տնատերը Հու Մանուկին եննիցն արածնի մտնըմ տուն: Մին օթաղի տո՛ւռ ա պանց անըմ՝ լիքը մարթի կլոխ, մին տո՛ւռն էլ ա պանց անըմ, լիքը՝ լեչ:

Ասըմ ա.—Ըստանք չիման էլ քե մնան դոնաղ են իլել իմ տանը: Ով տուն ա մտել, Հացըս կերել, տեղաչորըմըս քնել, ինձ նախատել ա, թան ոնց ա, որ շանը Հալալ թիքեքն եմ տալիս ինձ բարաբար, կնգանըս՝ թըրմասը:

էզզանմին էլ իմ սրոր պատմել եմ, համա տեսել եմ, որ ընդանք իմ կրլխին օյին կրպերեն, կլոխնին կրտրել եմ, տանել ստեղ:

Էսքամից եղո էլ, որ տենում ա Մանուկը ոչ լանվն ա ասում, ոչ՝ փիսը, աջղվում ա.—Ա՛հ հեր օրթնած, դե մին պանն ասա, էլի՛...

—Ինչ ասեմ, իմ ինչ կոռծն ա, թան տո՛ւ ինչ ես անում քու տանը:

—Դե ասա՛, կնի՛կ, խոխա ունե՞ս:

—Ունեմ: Համա հեսա քանի տարի յա իրենսին տեսել չեմ, գիղում չեմ՝ ինչ հալի են:

—Հա՛, որ ըտենց ա տո՛ւ ինձ կըհըսկանաս: Ես էլ քե մնան կընգանըս հու տղիս թողացի տանը քինացի օտարութուն, թան ինչ ա մին քանի կապեկ ճարեմ, պերեմ քոկփանթըս պահեմ: Չորս տարի աս կացավ: Կոռծերըս ալչու ին, խելանք փող վհաքեցի, ետ տանան տուն: Կան տուն, իչ տեսնամ, որ լավ ինի: Էս լեռիք խոխիս սպանել էր, ինքն էլ մին ջանհիլի նհետ չնութուն էր անում: Արինը տվավ կլոխս, ուզեցիմ, թան մին լավ հախիցը կան, համա ուրանք էրկուսով ին, ես՝ մինակ, վրան թափան թան ինձ էլ սպանեն, համա չունըս վրան հըսավ, սկսավ էրկուսին էլ քըրքըրիլը: Ես պրծա: Տեսա, որ չունը ավելի հավաղարիմ ա, քանց կնիկը, տեղերը փոխեցի: Կընգանըս զինջիլեցի, կապեցի շան տեղը, շանս էլ նըստըցրի սուփրիս կոխկին հու ամենամղիղ թիքքըր ընդրա նհետ եմ կես անում: Աստոծ եմ կանչել, որ տո՛ւ ըտենց գոկո՛ւմի ոնաստ չըկան:

Տնատերին մնաս պարով ասիլով Մանուկը ճընապա յա ընգնում: Շատ ա քինում, թան քիչ, ինքը գիղան, մին օր էլ ընգնում ա մին հարուստի տուն, էյվանըմը ճոկ են փրոքում, քնում ա, համա քունը տանում չի, էնքան սոված ա ինքն: Ռավոտն էլ որ վեր ա կենում, էլհան հաց չեն տալիս:

—Տնատեր՛, —ասում ա Մանուկը, —հացի քանանդ տարի յա, հաց չեմ ուզում, թան թանհըր ունես, մին քանի մանեթ փող տու, պարտկիտ տակիցը տո՛ւս կըկամ:

—Այչի՛, ճընապե՛տ քինան, ես էլ հանամ նոր եմ փողի տեր տանել, ամման ուզողի որ տամ, տակին ի՞նչ կըմնա:

—Անգաճըտ կանչի, Մուրա՛դ աղա, քու ասած թանգան քիսի եմ ոնաստ եկել, —ասում ա Մանուկը, էլհան ընգնում ճընապա:

Կրլխնիտ ինչ ցավըցնեմ, վերչը հըսնում ա ուրան տունը, համա աչկերին վհատում չի: Քոհան տան տեղը մին դանչանդ օթաղ ա տենում: Տո՛ւր անսանց պանց ա անում, նի մընում, տենում ա կնիկը մին ջանհիլ խոխի նհետ քնած ա, աչկերը մթնում ա, աչկի առաջն ա կանխ էն տնատերը, որ կընգանը կապել էր շան տեղը: Ման ա կանխ, կացինը ճարում, պըցըցնում ա, որ էրկուսին էլ էրքանէրի թողա, համա միտն ա կանխ Մուրադի ասածը, հերսը պահում ա, հենց

էտ վախտը կնիկը վեր ա թըռնում, մարթին որ տենում ա սաղ-սա-լամաթ, ծրկըլթալով ընգնում ա խտիտը, սկսում պըչպըչորիլը:

Տղեն էլ ա գարթնում հու մորը հըրցընում.—Ա՛ մեր, էս ո՞վ ա:

—Հերըտ ա էկել, բալա՛ ջան:

Մանուկը էս որ լսւմ ա, սիրտը փուլ ա կալիս, թն որ ինքը բնգըրգանի ասածը մըտկումը պահած չիներ, հերսը նըստըցրած չիներ, ինչ կիներ վերչը:

Մին քանի օրից եղը, Մանուկը եփ կարոտն ա առնում ա, էլհն տըմանում չի, հըրցնում ա.—Ա՛ կնիկ, ես ծեղ թողացի հացի կարոտ, էս կայքը, կարողութունը չտեղա՞ն ա:

—Ո՞նց թն,—գարմանում ա կնիկը,—բա տու չե՞ս փող դըրկել:

Մհի էլ գարմանքը Մանուկին ա տանում:

—Ի՞նչ փող, ա՛՛ կնիկ, ինձ փող չտեղա՞ն ա իլել, որ դըրկեմ:

Կնիկը ստեղ սկսւմ ա պատմիլը.—Քու քիննալից եղը սև ճուր էր թափվել կլխներիս: Չոլիցը ժանգալ-մանգալ վհաքիլով, ըստանից-ընդանից փոխ առնիլով մին տարի ու կես յոլա քիննացինք: Օրերից մին օր էլ մին մարթ եկավ մեր տուն, խելնք փող պերավ, թն արխային կացեք Մանուկը շատ լնվ ա, ախշաղըմ ա, մնջնլ չունի, թն կն: Ըստանա եղո էրկու-իրեք ամիսը մին քե մհար փող կըղըր-կի: Ընդրանա եղը հա մարթ էր կալիս, հա փող էր պերում, դե մենք էլ տղիտ նհետ ապրում ինք:

Մանուկն ըստեղ մատը կծւմ ա, թն կա, կա ոչ, էս բնգըրգան Մուրադի արածն ա, ուրն դոնլուղը հնմնչն դրկել ա տուն:

Ախշարքովը մին ա տառնում, որ երգրի իրեսին Մուրադի մնան մարթիք էլ կան: Ըստեղ էլ օրթիւմ ա ուտում, որ ընդրա փեչկի տա-կին հնմնչն մարթ կարա դինջ ապրի, ինքն էլհն պետմա քինն ընդրա կուշտը:

Մնրղըվանը պըրծավ, մենք էլ հըսանք տեղ»:

Չիմմն էլ գարմանում են, եփ տեսնում են, որ հըսել են կեղը:

Մին էլ տենում են՝ կեղացիք հեսա մին մեռալ են տանում թաղիլի, թաքավորը մինին կանչւմ ա, հըրցընում.—էտ մարթը միանքամի՞ց ա մեռել, թն հնլն ապրիլի թնհըր ունի:

Մարթը հերստած ելւմ ա դարիբին, թըքըմ, որ օրը ցիրեկով դամմազի յա ոնստ եկել:

Համա չորանի ախճիկն ասւմ ա.—Միանքամից մեռնում ա էն մարթը, որ ժնռննգ չունի, համա էտ մարթը, որի մեյիղը տարան, չորս դոչ տղա, երկու էլ թնուլն ախճիկ ունի: Հնլն միանքամից չի մեռել:

Հողը թող թիթև ինի ընդրա վրեն:

Թաքավորը տենում ա, որ էն ինչը ինքը ճրաքով էր ման կալիս,

օրը ցիրեկով ա քթել, որ էտ ախճիկը հենց էն ա, որին ինքը ման ա կալիս, համա էլի շարունակում ա փորցիլը:

Եփ հըսնում են տուն, ախճիկը սկսում ա ուտիլի թաղանթիք քաշիլը, իսկը թաքավորը մին քանի ծուլ յա տալիս չոբանին, թա՛. «Տար տո՛ւր ախճըկանըտ, ասա՛, թո թուխսը տինի, ճըտերը հանի, որ էքուց քսօրին ճտի միս պետմա ուտեմ, շատ եմ սիրում»:

Հերը կլոխը տըմբտըմբըցնիլով ծուլները տանում ա տալիս ախճըկանը, հետն էլ թա՛. «Ուելագարի ծեռ ենք ընգել, էս ղոնաղը սըհենց ախմախ պան ա փըսպարել»:

Ախճիկը սուսուփուս ծուլները վեր ա ունում, հորը տալիս ա մին պոլոը ցորեն, թա՛ տար տո՛ւր ղոնաղիտ, ասա՛, ճտերը տոս են եկել, համա փըթոռուկ չըկա, որ տամ, սովից սատկեն ոչ: Թո ցորենը սերմի, արտը հընձի, թալի, ցորենը լվանա՛, չորըցնի, տանի ճաղաց անիլը անի փըթոռուկի մհար:

Հերը կլոխը քորիլով քինում ա ղոնաղի կուշտը, ցորենը տամ ա ընդան, համա կարում չի կլխի ընգնի, թա՛ էս ինչ մըսըհաթ ա:

Թաքավորը էս անքամ ծոցիցը անբըրըշումի որթ ա հանում, թա՛ տար տո՛ւր ախճըկանըտ թող ընենց անի, որ քչերը բոժոժ տինեն, ռավոտը թել մանի անբըրըշումի մին շապիկ կոծի ուրա՛ մհար:

Շըշկըլված հերը էս անքամ էլ ա քինում ախճկա կուշտը:

Ախճիկը թթի մին չեվ ա տալիս հորը, որ տանի տա խելունք ղոնաղին, որ՝ տընգի, ճրի, մեծըցնի, տիրելը տանք որթն ուտի, ծառն էլ չորըցնի, կըտրի, դաճզա՛հ չինի, որ անբըրըշում կոծեմ:

Ըստեղ թաքավորը տենում ա, որ կոտորն ա ընգնիլու, չոբանին պատմում ա ուրա՛ ով ինիլը, եղո կանչում ա ախճըկանը, ճակատը պաչում, թա՛. —Տարուց ավելի յա ես քեզ ի ման կալիս, քթա, սորվանից տո՛ւ իմ աչկի լիս հարսն ես, իմ ախշարքի էքուցվա թաքուհին:

Հորն էլ, ախճկանն էլ վեր ա ունում պերում պալատը, տղին փսալում ա, օխտն օր, օխտը քչեր հըրսանիք ա անում, եղո ուրա՛ օմոլը տալիս ա ընդանց, ու ինքը հանգիստ սըրտով մեռնում:

Ասում են՝ թաքավորի մեռնիլիցը եղը ախշարքն էվելի յա չենանում, մարթիք ինչ կանգատով կալիս են թաքավորի կուշտը, համա՛ն անթափ դադ ու դադաստան են տեսնում, ոչ մինն էլ կըլխի չի ընգնում, որ էտ թաքավորի տղի հոնանը չի, խելքի ծով ուրա՛ կընգա՝ չոբանի ախճկա հոնանըն ա:

Աստոծ, տո՛ւ մինի խելքը որ առնում ես, մեխկ ա, ընդրան էս չոբանի ախճկա մնան մին խելունք, հալալ կաթնակեր, ծեռիցը ամման ինչ եկող կնի՛կ տու, որ կարա մարթավարի ապրիլ: